Արձանագրություն N 4
ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16.07.2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Գաբրիելյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Լ. Թունյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի բանակցությունների վերաբերյալ

ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 1-ի մասնակիցներ՝ «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ն և «Ջրարբի» ՍՊԸ-ն ներկայացրել են հավասար նվազագույն գներ:

Հիմք ընդունելով Հրավերի 8.6 կետը գնահատող հանձնաժողովը 14.07.2025թ. նիստը կասեցրել է և «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ին, «Ջրարբի» ՍՊԸ-ին 16.07.2025թ. հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ռ. Գաբրիելյանը բանակցությունների մասնակիցներին ներկայացրեց Ընկերությունների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկները:

16.07.2025թ. ժամը 12:30-ին բանակցություններին մասնակցում էր «Ջրարբի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Պետրոսյանը:

«Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բանակցություններին չի մասնակցել:

«Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը համարվում է անփոփոխ:

Մասնակցի (ների) գնային առաջարկը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 360 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» -ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս բնակավայրի խմելու ջրի գլխամասային հանգույցի և մաքրման կայանի կառուցման, գոյություն ունեցող ավազային մաքրման կայանի ապամոնտաժման և վերակառուցման				
1	«Ջրարբի» ՍՊԸ	300 000	0	300 000
Բանակցությունների արդյունքում մասնակցի առաջարկած նոր գին				
2	«Ջրարբի» ՍՊԸ	295 000	0	295 000

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի (Չափաբաժիններ 1, 2-ի մասով) ընտրված մասնակից հայտարարել «Ջրարբի» ՍՊԸ-ին,

2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ռ. Գաբրիելյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Լ. Թունյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան